Известия АН Армянской ССР, Науки о Земле, 2, 63—73, 1972

УДК 551.4

Լ. Ն. ՋՈՀՐԱԲՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ ԵՎ ՆՐԱ ԼԵՌՆԱԳՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ

Առաջավոր Ասիայի երիտասարդ լեռնային գոտու խոշոր միավորների թվին է պատկանում Հայկական լեռնաշխարհը՝ երկրաբանական բարդ կառուցվածք և լեռնագրական-գեոմորֆոլոգիական բազմազան բնույթ ունեցող մի բարձրադիր լեռնային երկիր, որը գտնվում է Փոքրասիական բարձրավանդակի և Իրանական լեռնաշխարհի միջև։

Հայկական լեռնաշխարհ հասկացությունը նախ և առաջ լեռնագրական է և գեոմորֆոլոգիական։ Այս առումով նա լեռնային գոտում տեղադրված, շրջապատի նկատմամբ բարձրադիր միասնական լայնարձակ տերիտորիա է.

1. Հայկական լեռնաշխարհի և մյուս լեռնագրական պրովինցիաների սահմանները։ 2. Մարզերի սահմանները.

Քարտեզի վրա՝ էոգիոն կառուցվածքային լեռնաշղթաներից բաղկացած խոշոր լեռնա-սիստեմների մարզեր՝ *I. Արևելյան Պոնտոսի, II. Ներքին Տավրոսի, III. Արևելյան Հայկական Տավրոսի, IV. Կորդվաց (Քրդստանի), V. Մերձարաքսյան, VI. Փոքր Կովկասի, VII. Ճորոխ-Քրիալեթյան,* բարձրավանդակների մարզեր՝ *ա) տեկտոնա-հրաբխային (Հայկական հրաբխային բարձրավանդակ), VIII. Հյուսիսային, IX. Հարավային, բ) տեկտոնա-դենուդացիոն, X. Վասպուրականի, IX Փոքր Հայքի (Ուկունյայլայի),* Պարահարթային մարզ՝ *XII. Էլ-Ջեզիրե (Հայկական միջագետքի)։*

ռելիեֆի համալիրների ու ձևերի մեծ բազմազանությամբ։ Այն բաղկացած է լեռնասիստեմներից, բարձրավանդակներից, սարահարթերից, միջլեռնային գոգավորություններից և այլն [3]։ Լեռնային այդ երկրի առանձնացումը որպես ինքնուրույն լեռնագրական և գեոմորֆոլոգիական միավորի, հիմնականում

պայմանավորված է ինտենսիվ դիֆերենցված նեոտեկտոնական շարժումներով և նեոգեն-չորրորդականի ակտիվ հրաբխականությամբ, որոնք ստեղծել են ծալքավոր-բլոկային և բեկորային-հրաբխային ծագման պատկանող լեռնային բարդ ռելիեֆ՝ գոյացած ալպյան լեռնակազմական ցիկլում Սև ծովի, Կոլխիդայի, Կուր-Կասպիական, Ուրմիա լճի և Հյուսիսային Միջագետքի իջվածքների միջև։

Հայկական լեռնաշխարհի բնական սահմաններն առավել հստակ են հյուսիսում, հյուսիս-արևելքում։ հարավ-արևելքում և հարավում, որտեղ նա առանձնանում է կից ցածրադիր հարթություններից ու ջրավազաններից, իսկ արևմուտքում և արևելքում այն աստիճանաբար փոխանցվում է Փոքրասիական բարձրավանդակին ու Իրանական լեռնաշխարհին։

Հարկ է նշել, որ Հայկական լեռնաշխարհի դիրքի և սահմանների վերաբերյալ կարծիքները խիստ տարբեր են, որը պետք է բացատրել ոչ միայն նրա բնական սահմանների որոշ մասի անորոշությամբ, այլև հեղինակների սուբյեկտիվ մոտեցմամբ, ելնելով իրենց գիտության տեսանկյունից։ Հայտնի է, որ այդ սահմանների առաջին «որոշողները» եղել են երկրաբաններ, պատմաբաններ, ազգագրագետներ, տնտ. աշխարահգրագետներ, երբեմն միայն ֆիզ. աշխարհագրագետներ, որոնք բնականաբար Հայկական լեռնաշխարհը չէին կարող դիտել որպես լեռնագրական կամ գեոմորֆոլոգիական միավոր, ինչը մեր կարծիքով ամենակարևորն է այն առանձնացնելու համար որպես լեռնաշխարհի։ Այդ միասնական ինքնատիպ լեռնային երկրի դիրքի ու սահմանների նկատմամբ նման սուբյեկտիվ, կասենք որոշ դեպքերում նաև կամայական, մոտեցումը պատճառ է դարձել այն բանի, որ այսօր շատ թե քիչ միանման կարծիք գոյություն չունի նրա վերաբերյալ։ Յուրաքանչյուր հեղինակ յուրովի է պատկերացնում Հայկական լեռնաշխարհի տերիտորիան, հաճախ այն նույնացնելով Հայաստանի պատմական տերիտորիայի հետ, կամ այդ անվան տակ առանձնացնելով միայն նրա միջնաշխարհը՝ Հրաբխային բարձրավանդակը։ Ճիշտ է, չի կարելի ժխտել, որ Հայկական լեռնաշխարհում է ծնունդ առել հայ ժողովուրդն ու նրա հիմնական տերիտորիայի վրա կերտել իր հազարամյակների պատմությունը, սակայն լեռնաշխարհի բնական սահմանները հարմարեցնել այնտեղ տարբեր ժամանակներում ստեղծված ու փոփոխված պատմական-քաղաքական ու վարչատերիտորիալ սահմանների հետ, կլինի սխալ, նույնիսկ ոչ գիտական։

Հայկական լեռնաշխարհի մի շարք ուսումնասիրողների մոտ, հատկապես սկզբնական շրջանի [2, 5, 6, 7, 8, 17, 28], չի նկատվում նրա բնական սահմանների հստակ որոշումը։ Այն նկատելի է միայն վերջին քսանամյակներում հրապարակ եկած մի շարք հոդվածներում, քարտեզներում կամ մենագրություններում (9, 12, 14, 22, 34)։

Հայկական լեռնաշխարհի սահմաններից առավել «շարժականը» արևմտյանն է, որը տարբեր հեղինակների [1, 2, 4, 5, 6, 9, 12, 14, 17, 22] կողմից նշված է տարբեր տեղով։

Նույնը վերաբերում է նաև նրա հարավ-արևմտյան սահմանին։ Սակայն պետք է նշել, որ նրանց մեծ մասը չի համընկնում այդ ընդարձակ բարձրադիր լեռնային երկրի բնական սահմանների հետ։

Իսկ ի՞նչը կարող է լինել լեռնաշխարհի բնական սահման։ Ըստ մեզ, այն կարող է լինել բարձրադիր միասնական ընդարձակ տերիտորիայի եզրային

լեռնաշղթաների արտաքին ստորոտը (և ոչ թե ջրբաժանը, ինչպես նշել են որոշ հեղինակներ), որը նրան իսկապես բաժանում է հարևան ցածրադիր դաշտավայրերի ու այլ կարգի գոգավորությունների հատակից։ Այդպես էլ մենք վարվել ենք Հայկական լեռնաշխարհը իրեն շրջապատող դաշտավայրերից ու գոգավորություններից սահմանազատելու ժամանակ։ Այսպես, նրա սահմանը հյուսիսում համարում ենք Սև ծովի ափագիծը և Փոքր Կովկասի հյուսիս-արևմտյան հատվածի արտաքին լանջի ստորոտը, որոնցով այդ լեռնային երկիրը անջատվում է լեռնագրական առումով նրան հակադիր՝ իջվածքային խոշոր շրջաններից՝ Սև ծովի ավազանից և Կոլխիդա դաշտավայրից, Հյուսիս-արևելքում լեռնաշխարհը Փոքր Կովկասի կենտրոնական և հարավ-արևելյան հատվածների արտաքին լանջի ստորոտով սահմանազատվում է Կուր-Արաքսյան դաշտավայրից, իսկ հարավ-արևելքում՝ Իրանական Կարադաղի ու Միշոուդաղի հարավային, ինչպես նաև Կորդվաց (Քուրդիստանի) լեռների արևելյան լանջերի ստորոտով՝ Ախարի գոգհովտից և Ուրմիա լճի խոշոր գոգավորությունից։ Գտնում ենք նպատակահարմար Հայկական լեռնաշխարհի սահմանը Կուր-Արաքսյան դաշտավայրից մինչև Կարադաղի հարավային ստորոտը տանել Արաքսի աջակողմյան վտակ Կարասուի հովտով, որից արևելք ռելիեֆն առավել սարահարթային է ու համեմատաբար ցածրադիր, իսկ արևմուտք՝ բարձրադիր ու լեռնային։ Այսպիսով, Հայկական լեռնաշխարհի բաղկացուցիչ մաս ենք համարում նաև Արևելյան Պոնտոսը հյուսիսում և Իրանական Կարադաղն ու Միշոուդաղ լեռնաշղթան իրենց կից Խոյի ու Մերենդի միջլեռնային փոքր գոգավորություններով՝ հարավ-արևելքում։

Մի քանի հեղինակների [12, 22,] կողմից Արևելյան Պոնտոսը Հայկական լեռնաշխարհից անջատելն ու Փոքրասիական բարձրավանդակին կցելը մեր կարծիքով ոչնչով չի հիմնավորվում և արհեստական է, քանի որ այն իր լեռնագրական բնույթով (բարձրադիր, խիստ մասնատված լեռնաշղթաներ) ու մորֆոլոգիայով (մերձզուգահեռականի ուղղությամբ ձգվող աղեղի մասեր կազմող թեք բեկորներ) առավել մոտ է Հայկական լեռնաշխարհին, քան Փոքրասիական բարձրավանդակին։ Առավել ևս, Արևելապոնտական լեռնասիստեմը լեռնաշխարհի մնացած մասից չի անջատված որևէ շատ թե քիչ խոշոր դաշտավայրով կամ գոգավորությամբ, իսկ Գայլգետի (Կելկիտ) ու Ճորոխի խրգումնային-էրոզիոն հովիտները լեռնաշխարհի այս շրջանում բնական անջատիչ սահման հանդիսանալ չեն կարող, քանզի նրանք նույն տիպի հովիտներ են, ինչպիսիք զարգացած են նաև լեռնաշխարհի այլ մարզերում։

Իրանական Կարադաղի և Միշոուդաղի շրջանը լեռնագրորեն (նաև երկրաբանորեն ու գեոմորֆոլոգիորեն) հանդիսանում է Հայկական լեռնաշխարհի մեջ մտնող Մերձարաքսյան լեռնագրական մարզի բաղկացուցիչ մասը։

Որոշ հեղինակներ Հայկական լեռնաշխարհին են վերագրում նաև Թալիշի լեռները [15, 16] և Իրանական Ադրբեջանը [22]։ Մենք այդ համարում ենք ոչ հիշտ, քանի որ Թալիշի լեռներն իրենց բոլոր հատկանիշներով, բացառությամբ տերիտորիալ պատկանելիությունից, հանդիսանում են Իրանական լեռնաշխարհի մասը կազմող Էլբուրսի լեռների անմիջական շարունակությունը դեպի հյուսիս-արևմուտք։ Ինչ վերաբերվում է Իրանական Ադրբեջանին, ապա այն իր լեռնագրական և երկրաբանական-գեոմորֆոլոգիական առանձնահատկություններով առավել մոտ է Իրանական, քան Հայկական լեռնաշխարհին։ Այդ մարզը մի ընդարձակ չափավոր ցածրություն է, որտեղ վեր են խոյանում

երկու մեկուսացած հրաբխային զանգվածներ՝ Սևհենդն ու Սևելանդաղը և մի շարք փոքր ու ցածրադիր էրոզիոն-լերկացած սարահարթեր անապատային ու կիսաանապատային մորֆոսկուլպտուրայով։ Նման ռելիեֆը խիստ բնորոշ է Իրանական լեռնաշխարհի միջին սարահարթային զոնային, որի անմիջական շարունակությունը դեպի հյուսիս-արևմուք հանդիսանում է ինքը՝ Իրանական Ադրբեջանը։ Հայկական լեռնաշխարհի հարավային սահմանը արևելքում՝ Ուրմիայի գոգավորությունից մինչև Մեծ Զաբ գետի միջին հոսանքը, ուր այն պակաս հստակ է (ձուլված է Զագրոսի հետ) պայմանականորեն տանում ենք Օմնևիե գոգավորությամբ ու Մարագգիի գետի (Մ. Զաբի վտակը) հովտով, Մեծ Զաբի միջին հոսանքից մինչև Ամբրդի (կամ Մարաշի) գոգավորությունը (արևմուտքում) Հայկական լեռնաշխարհի սահմանն առավել հստակ է։ Այն անցնում է Կորդվաց լեռնասիստեմի հարավային (արտաքին) լանջերի ստորոտով ու Ջեզիրե սարահարթի եզրով։ Այստեղ լեռնաշխարհն առանձնացնում է Միջագետքի (Մեսոպոտամյան) նախալեռնային խոշոր իջվածքից։ Այսպիսով Ջեզիրե ընդարձակ սարահարթը (հնում Հայկական Միջագետք) նույնպես համարում ենք լեռնաշխարհի բաղկացուցիչ մասերից, քանի որ այն բարձրադիր է և որոշ տեղեր ուղղակի աստիճանաբար ու աննկատ անցնում է Արևելյան Հայկական Տավրոսի լեռնասիստեմին և մեծ մասամբ հստակորեն անջատվում է հարևան նախալեռնային իջվածքից։ Այս առումով նա նման է Ստավրոպոլյան բարձրությանը։ Վերջապես Ջեզիրեն երկրաբանական կառուցվածքով ու մորֆոլոգիայով ավելի մոտ է երիտասարդ ծալքավոր-բլոկային ու բեկորային-հրաբխային կառուցվածք ունեցող Հայկական լեռնաշխարհին, քան թե Արաբական հին պլատֆորմային։

Առավել անհստակ է Հայկական լեռնաշխարհի արևմտյան բնական սահմանը, քանի որ այն արևմուտքում աստիճանաբար ու աննկատելի անցնում է Փոքրասիական բարձրավանդակին։ Միայն այդ երկու պրովինցիաների լեռնագրական ու մորֆոլոգիական համեմատաբար մանրամասն վերլուծությունը հնարավորություն տվեց մեզ որոշելու նրանց բնական սահմանը, ելնելով ռելիեֆի փաստերից։ Այդ սահմանը մենք համարում ենք Անթաքիա-Մարաշ-Սվաս-Թոքատ-Նիկսար-Գայլգետ-Եշիլ-Իրմակի գետաբերան մերձմիջօրեական գծով ձգվող իջվածքային նեղ զոնան, որտեղ տեղադրված են մի շարք փոքր գոգեր ու գոգավորություններ և նրանց միջև գտնվող սարավանդներ ու լեռնաշղթաների ցածրացած հատվածներ։ Այս խոսում է այն մասին, որ այստեղով անցնում է իջեցման լայնակի զոնա, իրարից «անջատելով» երկու բարձրադիր, բայց իրարից խիստ տարբեր լեռնագրական միավորներ։ Դրանցից մեկը՝ արևմտյանը իր լեռնագրական-գեոմորֆոլոգիական ընդհանուր հատկանիշներով բարձրավանդակ է (Փոքրասիական կամ Անատոլիական), իսկ մյուսը՝ արևելյանը՝ լեռնաշխարհ (Հայկական) [3]։ Հարկ է ավելացնել նաև, որ այդ սահմանը մի տեսակ աբեկման գիծ է, որտեղ արևելքում դուգահեռականի ուղղությամբ տարածվող երկրաբանական ու գեոմորֆոլոգիական-լեռնագրական զոնաներն իրենց ուղղությունը փոխում են, նրանից արևմուտք ընդունելով հարավ-արևմտյան ուղղություն։

Վերը նկարագրված սահմաններով առանձնացող Հայկական լեռնաշխարհը գտնվում է երեք պետությունների՝ ՍՍՀՄ-ի, Թուրքիայի և Իրանի տերիտորիայում։ Այս հանգամանքը պատճառ է դարձել, որ վերջին մի քանի տասնամյակում նրա հատվածներին տրվեն նոր անվանակոչում ըստ «քաղաքական»

կամ տերիտորիալ պատկանելիության, անտեսելով այդ լեռնագրական ու ֆիզիկա-աշխարհագրական միասնական միավորի ամբողջությունը։ Նրա արևմրտյան մեծ մասը, որը ժամանակակից Թուրքիայի տերիտորիայում է գրտնրվում, նրանց կողմից վերանվանված է Արևելյան Անատոլիա կամ Արևելյան սարահարթեր («Շարկ յայլասի»)։

Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան կամ Սովետական հատվածն առավել բազմանուն է։ Այն վերանվանված է «Малый Кавказ» [30, 31, 32, 33], «Антикавказ» [13, 24], «Закавказское нагорье» [16, 19, 21], «Южно-кавказское нагорье» (Ն. Ե. Աստախով), բայց ոչ «Армянское нагорье» կամ նրա արևելյան մաս։ Ստացվել է, որ Արարատից դեպի արևմուտք կա միայն Անատոլիա, իսկ դեպի արևելք՝ Փոքր Կովկաս կամ նրա վերը նշված տարատեսակներից մեկն ու մեկը։

Ի՞նչ որտե՞ղ է գտնվում ողջ աշխարհին հայտնի Հայկական լեռնաշխարհը, ոչ՝ սբյեկտիվ գոյությունը չեն ժխտում անգամ նշված հեղինակների մեծ մասը։ Նրանք Հայկական լեռնաշխարհը կամ նույնացնում են Փոքր Կովկասի հետ [10], կամ համարում վերջինիս բաղկացուցիչ մասը [25, 26, 29], կամ պարզապես համարում Հրաբխային բարձրավանդակի ՍՍՀՄ-ի սահմաններում գտնվող հատված [16, 19, 20]։

Մեր կողմից վերը նշված սահմաններում Հայկական լեռնաշխարհը զբաղեցնում է 397.570 կմ² և գտնվում է հյուսիսային լայնության 36°44′ ու 42°08′ և արևելյան երկարության 36°25′ ու 47°32′ միջև։ Նա առավել երկար է Մուշ քաղաքի զուգահեռականի ուղղությամբ, ուր հասնում է 950 կմ-ի և առավել լայն (500 կմ)՝ Լենինական քաղաքի միջօրեականի ուղղությամբ։

Հայկական լեռնաշխարհը միջին բարձրության խիստ մասնատված լեռնային երկիր է, որի միջին բարձրությունը 1700 մ է և ընդհանուր առմամբ ավելի բարձր է իր հարևանների՝ Իրանական լեռնաշխարհի և Փոքրասիական բարձրավանդակի համեմատությամբ։

Լեռնագրական առումով Հայկական լեռնաշխարհը բաժանվում է երեք ընդհանրացված տիպերի՝ խոշոր լեռնասիստեմների, ընդարձակ բարձրավանդակների և զգալի տարածություն զբաղեցնող նախալեռնային սարահարթերի։

Լ ե ռ ն ա ս ի ս տ ե մ ն ե ր ը, որոնք մեծ մասամբ կազմում են լեռնաշխարհի եզրային մարզերը, ոչ այլ ինչ են, քան եթե նեղ ու երկար, սուր կատարներով ու զառիթափ լանջերով լեռնաշղթաներ՝ իրենց բազմաթիվ բազուկներով։ Այդ լեռնասիստեմները, որոնք իրարից անջատվում են որոշակի բնական սահմաններով, մենք դիտում ենք որպես ինքնուրույն լեռնագրական միավորներ (մարզեր), այն է՝ 1) Արևելյան Պոնտոս, 2) Ներքին Տավրոս, 3) Արևելյան Հայկական Տավրոս, 4) Կորդվաց լեռներ, 5) Մերձարաքսյան լեռներ, 6) Փոքր Կովկաս, 7) Ճորոխ-Թրիալեթյան լեռներ։

Ա ր և ե լ յ ա ն Պ ո ն տ ո ս ը Հայկական լեռնաշխարհի հյուսիսային եզրային լեռնասիստեմն է, վեր խոյացած Սև ծովի և Գայլգետի ու Ճորոխի գետահովիտների միջև 560 կմ երկարությամբ և 60—100 կմ լայնությամբ։ Այս լեռնասիստեմը բաղկացած է երկու կուլիսաձև դասավորված առանցքային լեռնաշղթաներից, որոնցից արևելյանը անընդհատ աղեղով ձգվում է Ճորոխի ստորին հոսանքից մինչև Խարշիդ գետը 315 կմ երկարությամբ և 3300—2400 մ. բարձրությամբ։ Արևմտյան կուլիսը նույնպես աղեղնաձև։ Ձգվում է Գայլգետի ակունքներից մինչև Եշիլ-Իրմակի ստորին հոսանքը 310 կմ երկարությամբ։ Այն նախորդի համեմատությամբ ցածրադիր է։ Արևելյան աղեղի ա-

ռանցքային լեռնաշղթայից դեպի հյուսիս տարածվում են բազմաթիվ իրար զուգահեռ լեռնաբազուկներ, որոնք աստիճանաբար իջնում են դեպի Սև ծով։ Լեռնաշղթաների նման սանրաձև պատկերը արդյունք է երկրակեղևի խոշոր բեկորի թեք բարձրացման և միակողմանի մասնատման։ Արևմտյան կուլիսի մասնատումն ավելի բարդ է՝ ճառագայթաձև և հովհարաձև, որն արդյունք է խոշոր բեկորի վրա վերադրված երկրորդական գոգավորությունների ու գմբեթաձև բարձրացումների առկայության։

Ներքին Տավրոս.—Այս ընդհանուր անվան տակ մենք հասկանում ենք Հյուսիսային Հայկական Տավրոսի[1] արևմտյան մասը և բուն ներքին Տավրոսի[2] արևելյան մասը, որոնք նույնատիպ երկարավուն լեռնաշղթաներ են իրենց բազմաթիվ լեռնաբազուկներով։ Նկարագրվող լեռնագրական միավորը, որը գտնվում է նախորդից անմիջապես հարավ, ունի 400 կմ երկարություն և 100—120 կմ լայնություն։ Հյուսիսային Հայկական Տավրոսը և ներքին Տավրոսը այս միավորում իրարից տարբերվում են միայն մասնատվածության աստիճանով և բնույթով։ Առաջինը, որը Սև ծովի և Պարսից ծոցի գլխավոր ջրբաժանն է, ունի մասնատվածության համեմատաբար բարդ պատկեր, իսկ երկրորդը, պարզ, չնայած ավելի բարձր է։ Ներքին Տավրոսի լեռնային սիստեմն ընդհանուր առմամբ բաղկացած է երկրակեղևի կամարաձև ու շեղադիր բարձրացած բեկորների մասնատումից առաջացած լեռնաշղթաներից։

Արևելյան Հայկական Տավրոսը լեռնաշխարհի հարավային լեռնասիստեմն է, որը նեղ (30—100 կմ) գոտով ձգվում է մերձմիջօրեականի ուղղությամբ Ջահան (Ջեյխան) գետի ավազանից մինչև Բաղեշ (Բիթլիս-սու) գետը, ավելի քան 500 կմ երկարությամբ[3]։ Արևելյան Հայկական Տավրոսի լեռնասիստեմն առաջացել է դեպի հարավ թեքված երկրակեղևի նեղ ու երկար բեկորի էրոզիոն մասնատումից, որի արդյունքն են առանցքային լեռնաշղթաներից հարավային ուղղությամբ տարածվող ու աստիճանաբար իջնող լեռնաբազուկները։ Այս ընդհանուր ֆոնի վրա երևում է նրա առանձին հատվածների ավելի բարդ մասնատման պատկերը (կուլիսաձև, ծառանման, սանրանման և այլն)։

Կորդված լեռնագրական մարզը Հայկական լեռնաշխարհի առավել բարձր (մինչև 3500—4000 մ) ու «խճճված» լեռնասիստեմն է, տեղադրված Վանի, Ուրմիայի և Միջագետքի գոգավորությունների միջև 110—200 կմ լայնությամբ և 220—300 կմ երկարությամբ։ Կորդվաց (Քուրդիստանի) լեռները միայն հարավ-արևելքում հստակ սահման չունեն, որտեղ նրանք աստիճանաբար փոխանցվում են Զագրոսին։ Ընդհանուր առմամբ այս տերիտորիան երկրակեղևի խոշոր բարձրադիր բեկոր է, գոյացած լայնակի (Տավրոսյան) և երկայնակի (Տրանսկովկասյան-Հայկական) բարձրացումների հատումից։ Բե-

---

1 Երբեմն այդ լեռնասիստեմին անվանում են ուղղակի Հյուսիսային Տավրոս կամ Ներքին Տավրոս, Կելկիտ-Ճորոխյան լեռներ, Անտիպոնտոսյան լեռներ։

2 Կոչված է նաև Միջին Տավրոս կամ Հարավային Տավրոս։

3 Ընդունված է այս սիստեմին վերագրել նաև Վանա լճից հարավ գտնվող լեռնաշղթաները, բայց մենք գտնում ենք առավել նպատակահարմար այն համարել Կորդվաց լեռնասիստեմի բաղկացուցիչ մասը, ելնելով նրանց կեոմորֆոլոգիական նույնությունից և լեռնագրական միասնությունից։ Այդ լեռնաշղթաները Բաղեշի լայնակի տեկտոնա-էրոզիոն հովտով ցայտուն կերպով բաժանված են Հայկական Արևելյան Տավրոսից։

կորի հյուսիս, արևելյան և արևելյան թևերն առավել բարձրադիր են։ Այստեղ նկատելի են նաև վերադրված (наложенные) գոգածալային իջեցումներ և հորստաձև բարձրացումներ, որոնց էրոզիոն մատնատումից էլ առաջացել է լեռնաշղթաների այն բարդ պատկերը, որը մենք տեսնում ենք լեռնագրական քարտեզի վրա։

Մերձարաքսյան լեռնագրական մարզը զբաղեցնում է լեռնաշխարհի արևելյան մասը, որտեղ լեռնաշղթաները հյուսիս-արևելքից և հարավից իրենց մեջ են առնում Արաքսի միջին ավազանը։ Այստեղ ձախափնյա (ՍՍՀՄ տերիտորիայում) շրջանում աչքի է ընկնում մերձմիջօրեականի ուղղությամբ ձգվող Զանգեզուրի լեռնաշղթան իր մի շարք բազուկներով, իսկ աջափնյա շրջանում (Իրանի տերիտորիայում)՝ Իրանական Կարադաղը՝ բաղկացած երկու աղեղնաձև կուլիսներից, որոնք ընդհանուր առմամբ թեքված են ռելիեֆի հյուսիս։

Փոքր Կովկասի լեռնագրական մարզ ասելով հասկանում ենք այդ լեռնասիստեմի միայն կենտրոնական և հարավ-արևելյան հատվածները, քանի որ նրա հյուսիս-արևմտյան մասը (Մեսխեթյան և Թրիալեթյան լեռնաշղթաները) լեռնագրական-գեոմորֆոլոգիական, ինչպես նաև երկրաբանական ու ժամանակակից տեկտոնիկայի [27] առումով ավելի մոտ է Հյուսիսային Տավրոսի արևելյան շրջանին, քան Փոքր Կովկասի մնացած մասին և նրա հետ միասին ներկայացնում ենք որպես ինքնուրույն լեռնագրական մարզ (տես հաջորդը)։

Փոքր Կովկասի լեռնագրական մարզը Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան եզրային լեռնասիստեմն է, որը տարածվում է Խրամ գետից մինչև Արաքս գետը 350 կմ երկարությամբ և 50—120 կմ լայնությամբ։ Այս մարզում տարբերվում են լեռնաշղթաների «արտաքին» և «ներքին» շարերը։ Առաջինն աչքի է ընկնում լեռնաշղթաների կուլիսաձև դասավորությամբ և մասնատման սանրաձև պատկերով, իսկ երկրորդը՝ զուգահեռ կամ առանցքային դասավորությամբ։ Այս խոսում է այն մասին, որ Փոքր Կովկասի արտաքին լեռնաշղթաներն առաջացել են կուլիսաձև դասավորված թեք բեկորների, իսկ ներքին լեռնաշղթաները՝ հորատաձև կամ կամարաձև բարձրացումների մասնատումից։

Ճորոխ-Թրիալեթյան մարզը S տառի ձևով տարածվում է Ստորին Քարթլիի գոգավորությունից մինչև Ճորոխի վերին հոսանքները 450 կմ երկարությամբ։ Այստեղ լեռնաշղթաները համեմատաբար կարճ են, ցածր և տարբեր ձևով մասնատված։ Մարզի Աջարա-Թրիալեթյան շրջանը ներկայացնում են Փոքր Կովկասի հյուսիս-արևմտյան մասը հանդիսացող երկու կուլիսաձև դասավորված Մեսխեթյան և Թրիալեթյան լեռնաշղթաներ, իսկ Ճորոխյան շրջանը՝ Հյուսիսային Հայկական Տավրոսի արևելյան հատվածի սանրաձև ու ծառանման մասնատման պատկեր ունեցող կարճ լեռնաշղթաները։

Բարձրավանդակները զբաղեցնում են Հայկական լեռնաշխարհի միջնաշխարհը, նրա արևմտյան սահմանից մինչև Փոքր Կովկաս։ Մենք տարբերում ենք բարձրավանդակների ծագումնային երկու տիպեր՝ տեկտոնա-հրաբխային և տեկտոնա-դենուդացիոն։

Տեկտոնա-հրաբխային բարձրավանդակը, որը միջնաշխարհի առավել բնորոշ լեռնագրական միավորն է, հայտնի է նաև Հայկական հրաբխային բարձրավանդակ անվամբ։ Վերջինս զբաղեցնում է 80.000 կմ² տարածություն։

Այն բաղկացած է տարբեր տիպի ու բնույթի լեռնագրական տարրերից՝ լեռնավահաններից (վահանաձև լեռնաղանգվածներից), սարահարթերից, սարավանդներից, միջլեռնային գոգավորություններից, առանձին մեկուսացած լեռնաշղթաներից։

Լեռնավահաններն այստեղ հիմնականում տարածվում են երեք առանցքով՝ հյուսիս-արևելյան, հյուսիս-արևմտյան և մերիդիանական, որոնք բարձրավանդակի կենտրոնում ստեղծել են մի «եռանկյունի»։ Կան նաև մեկուսացած լեռնավահաններ, որոնք այդ առանցքներից դուրս են, ինչպես նաև բարձրավանդակի (անգամ Հայկական լեռնաշխարհի) սահմաններից այն կողմ գտնվող լեռնավահաններ խոշոր հանգած հրաբուխներով (Կարաջոլադաղ, Էրջիաս, Սեհենդ, Սեվելանդաղ), որոնք Հայկական հրաբխային բարձրավանդակի հետ լեռնագրական կապ չեն կարող ունենալ։

Սարահարթերն այստեղ տարածված են գլխավորապես երեք շրջաններում՝ Վանանդ-Ջավախքի, Վանա լճին կից և արևմտյան, ըստ որում յուրաքանչյուր շրջանում կան մի քանի սարահարթեր, որոնք իրարից անջատված են լեռնավահաններով կամ գետահովիտներով։

Ինչ վերաբերում է սարավանդներին, ապա նրանք կամ շրջափակում են լեռնավահաններին, կամ մեկուսացած կղզիների ձևով հանդես են գալիս նրանց կատարին, կամ էլ ներկայացնում սարահարթերի առանձին մասեր։

Հրաբխային բարձրավանդակի լեռնագրական կարևոր տարրերից են հանգած խոշոր հրաբուխները, որոնք կամ պսակում են լեռնավահաններին (Արագած, Թոնդրակ և այլն) կամ էլ մեկուսի են (Նեմրութ, Սիփան, Փոքր Մասիս և այլն)։

Այստեղ ռելիեֆում աչքի ընկնող դեր են խաղում նաև միջլեռնային գոգավորությունները, որոնք հիմնականում տեղադրված են լեռնաշխարհի խոշոր գետերի՝ Արաքս-Եփրատի և Արածանիի երկայնքով։ Այդ գոտիներից դուրս են Վանա և Սևանա լճերի գոգավորությունները։

Հայկական Հրաբխային բարձրավանդակը Արաքս-Եփրատ գծով հնարավոր է բաժանել երկու լեռնագրական մարզերի՝ հյուսիսային և հարավային։

Հ յ ո ւ ս ի ս ա յ ի ն մ ա ր զ ը[1] քառակուսի է (180-ական կմ), որից դեպի արևելք (220 կմ) և արևմուտք (100 կմ) տարածվում են նոր ու երկար լեռներ։ Տվյալ մարզի համար բնորոշ են կլոր և էլիպսաձև լեռնավահանները, խոշոր սարահարթերը, սարավանդները, մասամբ նաև միջլեռնային գոգավորությունները։

Հ ա ր ա վ ա յ ի ն մ ա ր զ ի լեռնագրությունն անհամեմատ բարդ է։ Այստեղ նախորդ մարզին հատուկ տարրերի կողքին ավելանում են նաև խոշոր հանգած հրաբուխներն ու ոչ այնքան մեծ գծային լեռնաշղթաները։

Տեկտոնական-գենուզացիոն բարձրավանդակները գտնվում են Հրաբխային բարձրավանդակից դեպի արևելք և արևմուտք։

Ա ր և մ տ յ ա ն (Ուզուն-յայլա) բարձրավանդակը 1600—2000 մ բարձրությամբ ձգվում է Եփրատից մինչև Անտիտավրոս։ Այս տերիտորիան պատմական Հայաստանի Փոքր Հայքի մի մասն է, իսկ այժմ համարվում է ներքին Տավրոսի արևելյան մասը, որը սակայն նրա արևմտյան հատվածի հետ ոչ մի

---

1 Այս մարզի արևելյան կեսը գտնվում է ՍՍՀՄ-ի սահմաններում, հիմնականում Հայկական և Վրացական ՍՍՀ-ներում։

նմանություն չունի։ Լեռնաշղթաների փոխարեն այստեղ տարածված են սարահարթերը, մնացորդային լեռնազանգվածները, փոքր գոգերը, որոնք հատուկ են բարձրավանդակին և ոչ թե լեռնասիստեմին։ Ահա թե ինչո՞ւ մենք այն դիտում ենք որպես ներքին Տավրոսից անջատ, ինքնուրույն լեռնագրական միավոր։

Արևելյան՝ Վասպուրականի բարձրավանդակը գտնվում է Վանա լճի Միջինարաքսյան գոգավորությունների միջև և լեռնագրական-գեոմորֆոլոգիական առումով անհամեմատ բարդ է։ Այս բարձրավանդակի «պատվանդանը» գտնվում է Տրանսկովկասյան-Հայկական լայնակի բարձրացման առանցքի վրա, որի պատճառով շրջապատի գոգավորությունների համեմատությամբ զգալի բարձր է (1400—1700 մ)։ Նրա վրա տեղադրված են փոքր չափի ու ոչ այնքան զգալի բարձրության կառուցվածքային-էրոզիոն լեռնաշղթաներ և լեռնազանգվածներ, տարբեր բարձրության վրա գտնվող գոգավորություններով շրջապատված։ Բարձրավանդակի եզրերում հանդես են գալիս նաև սարահարթեր։

Արտահարթային մարզը՝ Ջեգերեն (պատմական Հայկական Միջագետքը) գտնվում է լեռնաշխարհի հարավում և ներկայացնում է նրա նախալեռնային մասը։ Այն բաղկացած է ընդարձակ դենուդացիոն և հրաբխային սարահարթերից, որոնց վրա տեղ-տեղ վեր են խոյանում առանձին կառուցվածքային-մնացորդային ցածրադիր լեռնաշղթաներ (Մասիուս կամ Մարդինի և այլն) ու մեկ խոշոր, բայց ցածր լեռնավահան (Կարաջոլադաղ)։

ՀՍՍՀ ԳԱ երկրաբանական
գիտությունների ինստիտուտ

Ստացված է 10.IX.1971.

Л. Н ЗОГРАБЯН

АРМЯНСКОЕ НАГОРЬЕ И ЕГО ОРОГРАФИЧЕСКИЕ ЕДИНИЦЫ

Резюме

Армянское нагорье—одна из обширных (397.570 *кв. км.)* горных территорий Западной Азии, занимает промежуточное положение между Малоазиатским и Иранским нагорьями. Оно прежде всего орографическое и геоморфологическое поднятие, представляя единую провинцию типа высокой глыбовой страны (Ф. Махачек), расположенную между крупными впадинами Черного моря, Колхидской, Кура-Араксинской, Урмийской и Месопотамской котловин.

В его пределах выделяются три обобщенных типа орографических комплексов: системы хребтов, нагорные плато и плоскогорья

Системы хребтов расположены по периферия нагорья, окружая с трех сторон области нагорных плато (по-армянски—барцравандак, по-немецки—Hochland, по-английски—Upland), которые занимают центральную часть нагорья. Они делятся на два генетических типа—тектоно-

вулканический (известный в литературе как Армянское вулканическое нагорье) и тектоно-денудационный (Узун-яйла—западнее и Васпураканское—восточнее Вулканического).

Область плоскогорий (Эль-Джезире) является предгорной возвышенностью типа структурно-денудационных и вулканических плоскогорий.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավետիսյան Կամսար. *Հայկական բարձրավանդակ և Արևմտյան Հայաստան հասկացողությունները և նրանց ոչ ճիշտ օգտագործումը մի շարք հեղինակների մոտ։ Տեղեկագիր Հայկ. ՍՍՀ ԳԱ, հասարակ. գիտութ., 7, 1950։*
2. Գեորգ Մեսրոպ. *Հայաստան (աշխարհագրական, պատմական ցեղագրական, վիճակագրական և մշակութային տեսակետներով). Կ. Պոլիս, 1919։*
3. Զաճերաբյան Լ. Ն., Աբրահամյան Գ. Ս., Գեորգյան Ֆ. Ս. *Լեռնային ռելիեֆի մի քանի հասկացությունների մասին. Հայկ. ՍՍՀ ԳԱ տեղեկագիր. Գիտութ. երկրի մասին, 2, 1971։*
4. Լեո. *Հայոց պատմություն, Թիֆլիս, 1917։*
5. Հակոբյան Թ. Խ. *Հայաստանի պատմական աշխարհագրություն. «Միտք» հրատ., 1968։*
6. Տեր-Հակոբյան Ա. *Ֆիզիկական, ազգագրական և քաղաքական աշխարհագրություն Հայաստանի, Թիֆլիս, 1914։*
7. *Абих Г.* Геология Армянского нагорья. Западная часть. Орографическое и геологическое описание. ЗКОИРГО, кн. XXI, 1899.
8. *Абих Г.* Геология Армянского нагорья. Восточная часть. Орографическое и геологическое описание. ЗКОИРГО, кн. XXIII, 1902.
9. *Александровская Н. В., Пармузин Ю. П., Рябчиков А. М.* Карта физико-географического районирования Азии. В кн.: «Физико-географический атлас Мира», М., 1964.
10. *Асланян А. Т.* Региональная геология Армении. Айпетрат, Ереван, 1958.
11. Атлас Мира. Второе издание, М., 1967.
12. *Бальян С. П.* Структурная геоморфология Армянского нагорья и окаймляющих областей. Изд. ЕрГУ, Ереван, 1969.
13. *Габриелян А. А.* Палеоген и неоген Армянской ССР. Изд. АН Арм. ССР, Ереван, 1964.
14. *Габриелян Г. К.* О некоторых географических понятиях Армянского нагорья. Известия АН Арм. ССР, серия геол. и геогр. наук, № 5, 1961.
15. *Гвоздецкий Н. А.* Физическая география Кавказа. Вып. 1, Изд. МГУ, 1954.
16. *Гвоздецкий Н. А.* Физическая география Кавказа. Вып. 2, Изд. МГУ, 1958.
17. *Гукасов Абр.* Основные черты строения Армянского нагорья. ЗКОИРГО, кн. XXII, вып. 1, Тифлис, 1901.
18. *Добрынин Б. Ф.* Закавказье. Опыт физико-географической характеристики. Изд. АН СССР, 1940.
19. *Добрынин Б. Ф.* Физическая география СССР. Европейская часть и Кавказ. Учпедгиз, М., 1948.
20. *Думитрашко Н. В.* Основные черты рельефа и геоморфологического районирования Армении. Тр. Ин-та геогр. АН СССР, вып. 74, Мат. по геоморф. и палеогеогр. СССР, 18, 1958.
21. *Думитрашко Н. В.* Орография. В кн.: «Кавказ», «Наука», М., 1966.
22. *Ефремов Ю. К.* Западная Азия. В кн.: «Зарубежная Азия», Учпедгиз, М., 1956.
23. *Жуковский П. М.* Земледельческая Турция. М.—Л., 1933.
24. *Кузнецов С. С.* Вопросы геоморфологии Закавказья. В кн.: «Геология СССР», т. X. Закавказье, ч. I, Геологическое описание. Госгеолиздат, М.—Л., 1941.
25. *Кузнецов С. С.* Геология СССР. Изд. «Высшая школа», М., 1968.

26. *Леонтьев Л. Н. и Хаин В. Е.* О кайнозойском вулканизме Малого Кавказа. ДАН СССР, т. 67, № 4. 1949.
27. *Лилиенберг Д. А., Матцкова В. А., Горелов С. К., Думитрашко Н. В., Муратов В. М.* Карта современных вертикальных движений и морфоструктуры Кавказа. Проблемы современных движений Земной коры, М., 1969.
28. *Матвеев С. Н.* Турция. Изд. АН СССР, М.—Л., 1946.
29. *Милановский Е. Е.* Некоторые основные вопросы истории тектонического развития Малого Кавказа. Тр. совещ. по тектон. альп. геосинкл. обл. юга СССР. Изд. АН Азерб. ССР, Баку, 1956.
30. *Милановский Е. Е.* Новейшая тектоника Кавказа. «Недра», 1968.
31. *Милановский Е. Е.* и *Хаин В. Е.* Геологическое строение Кавказа. Изд. МГУ, 1963.
32. *Паффенгольц К. Н.* Геологический очерк Армении и прилежащих частей Малого Кавказа (на арм. яз.). Изд. АН Арм. ССР, 1947.
33. *Паффенгольц К. Н.* Геологический очерк Кавказа. Изд. АН Арм. ССР, Ереван, 1959.
34. *Рихтер Г. Д.* Физико-географическое районирование СССР. В «Физико-географическом атласе Мира», М., 1964.